«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

«Փոքր խմբերով աշխատանքի ազդեցությունը աշակերտների առաջադիմության վրա»

Հետազոտող ուսուցիչ՝ Իվանյան Սոնյա

Մեծամորի թիվ 1 հիմնական դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Միերյան Գայանե

ԱՐՄԱՎԻՐ 2023

Բովանդակություն

Ներածություն

Գրականության ակնարկ

Գործնական համատեքստ

Եզրակացություն

Օգտագործված գրականության ցանկ

Ներածություն

Առաջադիմության զարգացման համար հիմք է նախապատրաստվում դեռևս առաջին ուսումնական շաբաթների ընթացքում: Սա է պատճառը, որ աշակերտների առաջադիմության խնդիրների ուսումնասիրությունը կարևոր տեղ է զբաղեցնում ժամանակակից դպրոցի առանցքային խնդիրների շարքում: Այս համատեքստում կարևոր է նշել, որ աշակերտների առաջադիմության ցուցանիշների բարձրացմանը նպաստում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են աշակերտների պատրաստվածությունը դպրոց հաճախելուն և նրանց ադապտացման շրջանի հաջող ընթացքը սկզբնաշրջանում: Երեխայի պատրաստվածությունը դպրոցին, իր հերթին, բնութագրվում է անձի ընդհանուր զարգացվածությամբ՝ ինտելեկտուալ, մոտիվացիոն, հաղորդակցական և ֆիզիկական առումներով:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ աշակերտների առաջադիմության խնդիրը այսօրվա դրությամբ հանդիանում է բավականին բարդ խնդիր, որն ունի ոչ միայն մանկավարժական հիմքեր, այլև խորը հոգեբանական: Այն կախված է բազմաթիվ գործոններից, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել, երբ խոսքը գնում է աշակերտի առաջադիմության գնահատման մասին:

Այս պայմաններում մանկավարժի առջև դրված է կարևոր խնդիր՝ նպաստելու աշակերտների առաջադիմության բարձրացմանը և դրան նպաստող գործոնների ակտիվացմանը ուսումնական գործընթացում:

Տվյալ հետազոտական աշխատանքի նպատակն է նպաստել աշակերտների առաջադիմության բարձրացմանը և գրանցել այն հանգամանքները, որոնք նպաստում են դրան: Այդ համատեքստում փորձ է կատարվել վեր հանել առանցքային խնդիրներ, որոնք անմիջականորեն նպաստում են աշակերտների առաջադիմության ցուցանիշների բարձրացմանը, կիրառելով տարբեր մանկավարժական մեթոդներ և մոտեցումներ: Մասնավորապես, առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Առանձնացնել առաջադիմության բարձրացմանը նպաստող գործոններ;
- Առանձնացնել առաջադիմության գրանցման հիմնական եղանակները;

- Համագործակցային մանկավարժական մեթոդների կիրառմամբ ստեղծել իրավիճակներ՝ նպաստելու համար աշակերտների առաջադիմության բարձրացմանը;
- Գրանցել աշակերտների առաջադիմության շարժը և փոփոխությունները՝ ընտրված մեթոդների կիրառության արդյունքում:
- Առանձնացնել այն գործոնները, որոնք ազդում են աշակրտի առաջադիմության վրա (այդ թվում ուշադրության պակաս, ներգրավվածության պակաս, համագործակցության պակաս, ստեղծագործական մտքի և մոտեցման պակաս և այլն):

Նշենք, որ դպրոցական ծրագրերը, որպես կանոն, կազմվում են միջին առաջադիմությամբ աշակերտների համար: Սակայն, ցանկացած դասարանում հանդիպում են երեխաներ, ում առաջադիմության մակարդակը կամ ստանդարտից բարձր է, կամ ցածր: Այսինքն, երեխաները մշտապես տարբերվում են իրենց պատրաստվածության մակարդակով, մտավոր ունակություններով, ուսումնական ընդունակություններով և մի շարք այլ գործոններով, ինչով էլ պայմանավորվում է մեկ դասարանում տարբեր առաջադիմությամբ երեխաների մշտական առկայությունը: Բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները, որպես կանոն, ակտիվ են դասերին, ձգտում են արդյունավետ կերպով գիտելիքներ ստանալ, չեն խուսափում դժվարություններից:

Այսպիսով, կարծում եմ, այս հետազոտական աշխատանքի թեման բավականին արդիական է, քանի որ աշակերտների առաջադիմությունը ձևավորող և դրա վրա ազդեցություն թողնող գործոնների ուսումնասիրության խնդիրը մեծ արժեք է ներկայացնում մանկավարժական փորձի և պրակտիկայի համար:

Գրականության ակնարկ

Առաջադիմության գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակի համապատասխանության աստիճանը չափորոշչի պահանջներին, խթանելու սովորելու ձգտումը, բարելավելու կրթության որակը:

Մանկավարժական գիտության կարևորագույն խնդիրն է բացահայտել աշակերտների առաջադիմության էությունը և դուրս բերել առաջադիմության կառուցվածքային տարրերը:

Ըստ ժամանակակից մանկավարժական բառարանի, առաջադիմությունը սահմանվում է, որպես «ուսումնական ծրագրով նախատեսված և հաստատված գիտելիքների, հմտությունների, կարողությունների յուրացման մակարդակ՝ դրանց ամբողջականության, խորության, բազմակողմանիության, գիտակցվածության և ամրության տեսակետից» [Новиков А., Педагогика. Словарь системы основных понятий. М.: 2013, էջ 252]:

Առանձին առարկաների գնահատման համեմատական տվյալները բնորոշում են աշակերտների առաջադիմությունն ըստ յուրաքանչյուր ուսումնական առարկայի, ըստ առարկաների ցիկլի, ըստ դասարանների և ըստ դպրոցի ընդհանուր առմամբ: Աշակերտների բարձր առաջադիմությունն ըստ միջին ընդհանուր գնահատականների գրանցվում է այն դեպքում, երբ ուսումնական գործընթացում կիրառվում են տարբեր դիդակտիկ մեթոդներ, ուսումնառության ձևեր և միջոցներ, ինչպես նաև դաստիարակչական միջոցներ:

Ինչպես նշում է Ե. Կալմիկովան, աշակերտներին ներկայացվող պահանջները հանդիսանում են նրանց գնահատման չափանիշների մշակման հիմքը: Կրթության բովանդակային պահանջները կարող են իրականացվել միայն այն դեպքում, երբ դրանք չեն գերազանցում աշակերտների ֆիզիկական և հոգեբանական հնարավորությունները և համապատասխանում են երեխաների ուսուցման և դաստիարակության պայմաններին: Իսկ երեխաների հնարավորությունների մեջ կարելի է առանձնացնել երկու կարևոր ասպեկտներ՝ ֆիզիկական հնարավորություններ և հոգեբանական հնարավորություններ: Առաջինը ենթադրում է

աշակերտի օրգանիզմի վիճակը, առողջական ցուցանիշները, իսկ երկրորդի տակ հասկանում ենք աշակերտների մտածողության, ուշադրության, հիշողության, երևակայության և այլ չափանիշներ [Калмыкова Е., Проблемы преодоления неуспеваемости глазами психолога. – М.: 2002, էջ 48]:

Ա.Մարկովան [Маркова А., Виды отношений школьников к учению. – М.: 1984, էջ 12 - 13] առանձնացնում է աշակերտների առաջադիմության ցուցանիշների հետևյալ համակարգը.

- Կատարել զոնե մեկ միջնորդավորված եզրահանգում, համակարգել առկա գիտելիքները, կարողությունները և հմտությունները՝ նոր գիտելիքների ձեռք բերման և յուրացման ընթացքում;
- Զգտել գիտելիքների հանդեպ ստեղծագործական մոտեցման ցուցաբերմանը, ինքնուրույն աշխատանքին;
- Ակտիվորեն հաղթահարել դժվարությունները ստեղծագործական, ուսումնական գործունեության ընթացքում;
- Զգտել գնահատելու սեփական կարողությունները և ձեռքբերումները ուսման ասպարեզում:

Նշված պահանջների կատարումը կամ չկատարումը առանձին-առանձին կամ էլ դրանց ամբողջականության մեջ բնորոշում է աշակերտների առաջադիմությունը:

Այս պայմաններում ցածր առաջադիմությունն ընկալվում է, որպես իրավիճակ, որի դեպքում աշակերտի վարքը և նրա ուսումնառության արդյունքները չեն համապատասխանում դպրոցի դաստիարակչական և դիդակտիկ պահանջներին: Ցածր առաջադիմությունն արտահայտվում է նրանով, որ աշակերտը դրսևորում է կարդալու, հաշվելու թույլ հմտություններ, չի տիրապետում վերլուծություն կատարելու ինտելեկտուալ կարողությանը:

Այսպես, ինչպես նշում է Ա.Վենգերը, ցածր առաջադիմությունը – բարդ և բազմակողմանի երևույթ է, որը բնորոշ է դպրոցական, մանկավարժական իրականությանը և որը պահանջում է ուսումնասիրության բազմակողանի մոտեցումներ [Венгер А., Психологическое обследование младших школьников. М.: Издательство ВЛАДОС – ПРЕСС, 2004, էջ 150]:

Կ. Բարդինը [Бардин К., Если Ваш ребенок не хочет учиться. М.: 2008, էջ 125], խոսելով ցածր առաջադիմության գործոնների և հատկանիշների մասին, առաջ է բերում աշակերտների ուսումնական գործունեության հետևյալ թերությունները.

- Չի տիրապետում ստեղծագործական գործունեության նվազագույն անհրաժեշտ մակարդակի, չի կարողանում նոր իրավիճակում կիրառել իր ունեցած գիտելիքները;
- Խուսափում է ուսումնական դժվարություններից, պասիվություն է ցուցաբերում՝ դրանք հանդիպելիս;
- Չի ձգտում ստանալ տեսական բնույթի նոր գիտելիքներ;
- Չի ձգտում ընդլայնել սեփական գիտելիքները, կատարելագործել իր ունակությունները և հմտությունները:

Առաջադիմության հետ կապված խնդիրները կարող են ունենալ ամենատարբեր պատճառները: Եվ դրանցից մեկն է ադապտացվածության մակարդակը դպրոցին և ուսմանը: Այն արտահայտվում է երեք ասպեկտներով.

1. Անձնային ադապտացիա, որն արտահայտվում է դպրոցի, ուսման հանդեպ երեխայի վերաբերմունքի մեջ: Երեխան պետք է ունենա զարգացած մոտիվացիք և զգացմունքային կայունություն:
2. Ինտելեկտուալ ադապտացիա: Այս ասպեկտը ենթադրում է վերլուծական մտածողություն, տրամաբանություն, հետաքրքրություն գիտելիքի հանդեպ և այն ստանալու գործընթացի հանդեպ:
3. Սոցիալ-հոգեբանական ադապտացիա, որը ենթադրում է դպրոցականի դերի հաջող ստանձում և կատարում, համադասարանցիների և ուսուցչի հետ շփվելու պահանջ:

Այսպիսով, կարող ենք ասել, որ դպրոցում աշակերտների առաջադիմության վրա ազդեցություն են թողնում երկու խումբ գործոններ՝ սոցիալական և հոգեբանական: Այս համատեքստում նաև շատ կարևոր է ուսուցչի դերակատարությունը, քանի որ ուսուցչի կողմից ուսուցաննամ սխալ մեթոդների կիրառությունը, աշակերտների հետ դրական հաղորդակցական դաշտի բացակայությունը ևս մեծ ազդեցություն են թողնում երեխաների ցածր առաջադիմության վրա:

Գործնական համատեքստ

Հետազոտական աշխատանքի ընթացքում, որպես կենսաբանության դասաժամերին աշակերտների առաջադիմության վրա դրական ազդեցություն թողնելու մեթոդ, ընտրել եմ փոքր խմբերով աշխատանքը: Այս մեթոդը ունի կազմակերպման և իրականացման իր առանձնահատկությունները և նրբությունները, ինչպես նաև առավելությունները: Նաև հարկավոր է հաշվի առնել, որ փոքր խմբերով ուսուցման կազմակերպումը առարկայի դասավանդման ընթացքում խթանում է աշակերտների ակտիվությունը և բարձր ներգրավվածությունը դասերին, ինչը ևս կարևոր ցուցանիշ է աշակերտի առաջադիմությունը գնահատելու համար:

Այսպես, փոքր խմբերով ուսուցումը ուսումնական ռազմավարություն է, որում աշակերտների փոքր խմբերը աշխատում են միասին մի ընդհանուր հանձնարարության վրա: Հանձնարարությունը կարող է լինել հեշտ, պարզից բարդ անցումով:

Առանձնացվում են 5 հիմնական սկզբունքներ, որոնք նպաստում են հաջող խմբային ուսուցմանը: Դրանք են.

1. Դրական փոխկախվածություն – աշակերտները պատասխանատու են լինում իրենց և խմբի աշխատանքի համար:
2. Դեմ առ դեմ փոխազդեցություն – աշակերտները ոգևորում և աջակցում են իրար, շփվում են ուսուցման գործընթացում:
3. Անհատական և խմբային պատասխանատվություն - յուրաքանչյուր աշակերտ պատասխանատու է իր մասի համար, իսկ խումբը՝ ընդհանուր աշխատանքի համար:
4. Միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ – խմբային անդամները ստանում են հանձնարարություն միջանձնային, սոցիալական և համագործակցային հմտությունների նպատակով, որը անհրաժեշտություն է առաջացնում միասին աշխատելու:
5. Խմբային գործընթացի մշակում - խմբի անդամները վերլուծում են իրենց աշխատանքը թիմային աշխատանքի հետ միասին, ինչպես նաև թիմում յուրաքանչյուր աշակերտի համագործակցումը:

Փոքր խմբերով աշխատանքը զգալիորեն փոխում է աշակերտի և ուսուցչի դերը դասարանում: Դասավանդման և ուսուցման ղեկավարումը բաժանվում է աշակերտների խմբերի կողմից (միջև): Աշակերտները ավելի շատ հնարավորություն են ստանում սովորելու, հարցնելու, միմյանց հետ կիսվելու, ինչպես նաև քննարկելու իրենց գաղափարները: Նաև խմբային ուսուցումն օգնում է աշակերտներին ներգրավելու բանավեճի և քննարկել տարբեր հեռանկարներ:

Փոքր խմբերով ուսուցումը նպատակահարմար է կազմակերպել հետևյալ հիմնական փուլերով.

1. Նախաուսումնական պլանավորում – օգնում է հաստատել համագործակցային ուսուցման տեխնիկա և հիմք է հանդիսանում արդյունավետ խմբային աշխատանքների:
2. Աշակերտներին ներկայացնել գործընթացը – աշակերտները պետք է ստանան հրահանգներ: Պետք է բացատրել ակադեմիական հանձնարարությունը և թե ինչ չափանիշներ են պետք հաջողության համար: Հստակեցնել ժամանակահատվածը և թողնել, որ պարզեն հարցադրումներով:
3. Ստուգում և միջամտում – սրա ընթացքում խումբը աշխատում է, իսկ ուսուցիչը շրջում է դասարանում՝ ուսումնասիրելով աշխատանքը, ստուգելով՝ հասկացել են հանձնարարությունը, թե ոչ: Եթե խումբը ունի որևէ խնդիր, ուսուցիչը կարող է միջամտել և օգնել:
4. Գնահատումը – արվում է թե՛ հրահանգչին, թե՛ խմբին:

Այսպես, կենսաբանության դասաժամերին փոքր խմբերով աշխատանքի կազմակերպումը կարող է հիմնվել հետևյալ փորձի վրա:

Օրինակ, «Օրգանիզմների սաղմնային զարգացումը» թեման առանձնանում է իր բարդությամբ: Այդ պատճառով նպատակահարմար կլինի այս թեման ուսուցանել հենց փոքր խմբերի մեթոդի կիրառության միջոցով: Մասնավորապես, նկարագրենք այդպիսի դասաժամի հնարավոր ընթացակարգը:

Դասարանը բաժանել 4 հոգուց բաղկացած փոքր խմբերի՝ ձևավորելով այսպես կոչված «մայր» խմբեր: Այնուհետև խմբի անդամներին անհրաժեշտ է տալ որոշակի համարներ, ինչպես, օրինակ՝ 1, 2, 3, 4: Այս գործողությունից հետո պետք է ձևավորել այսպես կոչված «փորձարարական» խմբեր՝ խնդրելով նույն համարները կրողներին

միանհալ: Այսպես, բոլոր 1 համարները հավաքվում են առաջին խմբում, 2 համարները՝ երկրորդում, 3 համարները՝ երրորդում և 4 համարները՝ չորրորդ խմբում: Այսպես դասարանը բաժանվում է 4 փոքր խմբերրի:

Այնուհետև ուսուցանվող տեքստը ուսուցչի կողմից ւս բաժանվում է 4 հատվածների, և յուրաքանչյուր խումբ ստանում է դրանցից մեկը: Խնդիրը կքայանում է նրանում, որպեսզի ամեն խումբ ուսումնասիրի իրեն բաժին հասաց տեքստի հատվածը, պատասխանի հարցերին և խմբից մեկը այն ներկայացնի իր ընկերներրին և ամբողջ դասարանին: Յուրաքանչյուր խումբ պատասխանատու է լինում դասի իր հատվածը սովորելու և մյուսներին սովորեցնելու համար: Իսկ դրա համար ուսուցիչը ուղորդում է յուրաքանչյուր խմբի անդամներին, թե ինչպես և ինչ մեթոդներով տրված նյութը կարելի է ավելի հեշտորեն մատուցել դասընկերներրին, որպեսզի նրանք ևս սովորեն այն և պատկերացում կազմեն ամբողջ դասանյութից:

Իրենց մասը սովորելուց հետո փորձագիտական խմբի անդամներըվերադառնում են իրենց սկզբնական մայր խմբերը և նրանցից յուրաքանչյուրը իր մայր խմբի ընկերներին սովորեցնում է այն, ինչ սովորել է փորձագիտական խմբում:

Արդյունքում ստացվում է, որ ամբողջ դասարանը սովորել է դասը: Իհարկե, դրանից հետո անցում է տեղի ունենում դեպի խմբային աշխատանքի հաջորդ փուլ, երբ անհրաժեշտ է ստուգել աշակերտների ստացած գիտելիքները և այն, թե որքանով են նրանք յուրացրել տվյալ նյութը: Նաև հարկավոր է վեր հանել և լօրացուցիչ ներկայացնել այն հարցերը, որոնք դուրս են մնացել սովորողների ուշադրությունից՝ նյութը սովորելու ընթացքում: Այդ նպատակով հարկավոր է իրականացնել հարցում, ընդ որում, աշակերտին ուսուցիչը հարցնում է դասի այն հատվածը, որրի փորձագետը նա չի եղել: Այս կերպ հնարավոր է լինում միաժամանակ ստուգել ինչպես պատասխանողին, այնպես էլ այն աշակերտին, ով սովորեցրել է դասի այդ հատվածը: Ներկայացված նյութը լրացվում և մանրամասնվում է դասարանի մյուս աշակերտների կողմից, իսկ ուսսուցիչը միջամտում է այս գործընթացին միայն այն դեպքում, եթե դասարանի աշակերտներից ոչ ոք չի կարողանում պարզաբանել խնդիրը:

Այսպես, այս մեթոդով աշխատելիս աշակերտները ձեռք են բերում ոչ միայն գիտելիքներ, այկլև բարձր պատասխանատվության զգացում իրենից կատարած

աշխատանքի նկատմամբ: Դա պայմանավորված է նրանով, որ այս մեթոդով աշխատելիս աշակերտները պետք է դասի իրենց մասը սովորեն և ներկայացնեն այնպես, որպեսզի կարողանան սովորեցնել նաև իրենց խմբի անդամներին: Այս պարագայում աշակերտների մոտ ձևավորվում և զարգանում են նաև մի շարք կարևոր հմտություններ, ինչպիսիք են հաղորդակցվելու կարողությունը, ուշադրությունը և այլն:

Եվ վերջում անդրադառնանք խմբային աշխատանքների իրականացման մի քանի տարբերակների կամ մեթոդների դիտարկմանը, որոնք առավելագույնս ծառայում են իրենց նպատակին և խթան են հանդիսանում կենսաբանության դասերին աշակերտների ակտիվությունը և ներգրավվածությունը ապահովելու, ինչպես նաև առաջադիմության վրա դրական նազդեցություն թողնելու համար:

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ: Ուսուցման այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին:

Շրջագայություն պատկերասրահում: Այս մեթոդի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Կրտսեր տարիքի աշակերտների հետ աշխատելիս խմբերին կարելի է տալ նույն առաջադրանքը կամ խնդիրը: Աշխատանքը վերջացնելուց հետո, համեմատելով մյուս խմբերի աշխատանքների հետ, աշակերտները հետադարձ կապ են ապահովում:

Երեք բանալի և մեկ կողպեք: Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում,

որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Աշակերտներին առաջարկում ենք դասից դուրս գրել երեք նախադասություն (երեք բանալի), որը կարևոր է այդ նյութը յուրացնելու համար, բնագրից ընտրել մեկ նախադասություն (կողպեք), որը կամփոփի, կընդհանրացնի ասելիքը, միտքը, գաղափարը:

Հինգրոպեանոց ազատ շարադրանք: Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանքը:

Եզրակացություն

Ժամանակակից կրթական համակարգը մշտապես կատարելագործման ուղիներ է փնտրում, ինչպես նաև դրա հետ մեկտեղ փոփոխվում և առավել մշակված և հստակ են դասնում կրթական պրակտիկայի մեթոդները, մոտեցումները և ուսումնական գործունեության կազմակերպման ձևերը: Այս ամենը նպաստում է աշակերտների կրթական որակների բարելավմանը, մասնավորապես զգալիորեն բարձրացնու է աշակերտների առաջադիմությունը: Աշակերտների մոտ առաջադիմության ցուցանիշների բարձրացումը տեղի է ունենում դիդակտիկ նյութերի և մեթոդների, ուսուցման ձևերի և միջոցների, ինչպես նաև դաստիարակչական, համագործակցային, հոգեբանական իմջոցառումների կազմակերպման և ներդրման շնորհիվ:

Տվյալ հետազոտության արդյունքում հավաքագրված արդյունքների և դրանց ամփոփ ներկայացման հիման վրա կարող ենք եղրակացություններ անել այն մասին, թե ինչպիսի գործոնների ներդրման միջոցով կարելի է զգալի կերպով բարձրացնել դասարանում աշակերտների առաջադիմության ցուցանիշները:

Այդ միջոցներից հիմնական և առաջնային տեղն է զբաղեցնում ուսումնական նյութի մատուցումը մատչելի, տպավորիչ և արտահայտիչ եղանակներով (գունեղ պաստառներ, տեսադասեր, գործնական հանձնարարություններ և այլն), որոնք աշակերտի մոտ հետաքրքրություն են խթանում ուսուցանվող նյութի նկատմամբ: Հայտնի փաստ է, որ հետաքրքրությամբ առաջնորդվող աշակերտը միշտ զգալի բարձր արդյունքների է հասնում ուսման մեջ՝ ի տարբերություն այն աշակերտներից, ովքեր ուսումնական նյութը յուրացնում են առանց դրա հանդեպ որևէ հետաքրքրության, այսպես ասած, պարզապես պարտավորվածությունից ելնելով: Հետաքրքրությամբ յուրացված նյութը, ձեռք բերված գիտելիքը առավել կայուն տեղ է զբաղեցնում աշակերտի գիտելիքների շտեմարանում, մնայուն և հաստատուն է լինում:

Ուսումնասիրության արդյունքումյ նաև կարող ենք փաստել, որ աշակերտների առաջադիմության վրա զգալի ազդեցություն է թողնում աշխատանքը փոքր խմբերում, ընդ որում դա տեղի է ունենում հետևյալ գործոնների նրդրման և փորձարկման հետևանքով.

- Գունեղ և տպավորիչ դիդակտիկ նյութեր՝ դասանյութի մատուցման ընթացքում (պաստառներ, անիմացիոն տեսաֆիլմեր, գործնական առաջադրանքների կատարում և այլն);
- Աշխատանք փոքր խառը խմբերում, որտեղ ընդգրկված էին ինչպես բարձր, այնպես էլ միջին և ցածր առաջադիմությամբ աշակերտներ:

Այսպիսի միջոցների կիրառման արդյունքում աշակերտների առաջադիմությունը կարող է զգալի աճ գրանցել, և դա պայմանավորված կլինի նրանով, որ նույնիսկ ցածր առաջադիմությամբ աշակերտները բավականին մեծ ակտիվությամբ և հետաքրքրությամբ հանդես են գալիս փոքր խմբերում աշխատանքի ընթացքում, քանի որ իրենց վրա պատասխանատվություն են զգում խմբի արդյունքի համար և հնարավորություն չունեն «թաքնվել ստվերում»: Նրանք գիտակցում էն, որ նաև իրենցից է կախված իրենց խմբի առաջադիմությունը և բարձր գնահատականը ուսուցչի կողմից: Բացի դա, աշակերտները կարողանում են արդյունավետ կերպով համագործակցել միմյանց հետ իրենց խմբերի շրջանակներում, ինչի շնորհիվ նրանց հաջողվում է զգալի աճ գրանցել առաջադիմության ցուցանիշներում:

Այսպիսով, համագործակցային աշխատանքը, դասարանում էմոցիոնալ բարձր և բարյացակամ մթնոլորտի ապահովումը, հաջողության իրավիճակի ձևավորումը դասի ընթացքում նպաստու են նրան, որ աշակերտները առավել զգոն, ուշադիր, հետաքրքրված և ակտիվ աշխատանք են կատարում մատուցվող նյութի շուրջ: Դա, իր հերթին, նպաստում է նաև նրանց առաջադիմության բարձրացմանը, կայուն և հիմնարար գիտելիքների ձեռք բերմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Бардин К., Если Ваш ребенок не хочет учиться. М.: 2008
2. Венгер А., Психологическое обследование младших школьников. М.: Издательство ВЛАДОС – ПРЕСС, 2004
3. Калмыкова Е., Проблемы преодоления неуспеваемости глазами психолога. – М.: 2002
4. Маркова А., Виды отношений школьников к учению. – М.: 1984
5. Новиков А., Педагогика. Словарь системы основных понятий. М.: 2013